

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 26.12.2002

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օրինական շրջանառությունը ապահովող, ինչպես նաեւ դրանց ապօրինի շրջանառությունը կանխարգելող գործընթացների վրա:

Հոդված 2. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների մասին օրենսդրությունը

1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների (պատրաստուկների) մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կազմված է սույն օրենքից, այլ օրենքներից եւ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր եւ դրանց պրեկուրսորներ (այսուհետ նաեւ՝ թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր) բնական կամ արհեստական ծագում ունեցող նյութերի, պատրաստուկների եւ բույսերի ամբողջություն, որոնց շրջանառությունը եւ դրանց նկատմամբ հսկողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) 1961 թվականի՝ թմրաբեր միջոցների մասին միասնական, 1971 թվականի՝ հոգեմետ նյութերի մասին եւ 1988 թվականի՝ թմրաբեր միջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին կոնվենցիաներին համապատասխան.

թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի անալոգ (համանման)՝ սույն օրենքով սահմանված կարգով հաստատված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների կազմում չընդգրկված նյութեր.

թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների օրինական շրջանառություն՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների մշակում, արտադրություն, պատրաստում, վերամշակում, տեղափոխում, պահում, բացթողում, իրացում, ձեռքբերում, օգտագործում, առաքում, բաշխում, արտահանում, ներմուծում եւ ոչնչացում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառություն՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտումներով իրականացվող շրջանառություն (այսուհետ՝ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառություն).

թմրամոլություն՝ անձի հիվանդագին ֆիզիկական եւ (կամ) հոգեկան վիճակ՝ պայմանավորված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործմամբ:

թմրամոլությամբ հիվանդ՝ սույն օրենքով սահմանված կարգով անցկացված բժշկական հետազոտության արդյունքում «թմրամոլություն» ախտորոշում ստացած անձ:

թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի օգտագործում՝ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործում՝ առանց բժշկի նշանակման:

Հոդված 4. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների դասակարգումը

1. Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի կազմում փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Կախված հսկողության ձեւերից եւ միջոցներից՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների կազմում առանձնացվում են հետեւյալ ցուցակները.

1) թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր (ցուցակ 1), որոնց շրջանառությունը Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է (այսուհետ՝ արգելված նյութեր):

2) թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր (ցուցակ 2), որոնց շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում սահմանափակ է (այսուհետ՝ թմրամիջոցներ):

3) թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր (ցուցակ 3), որոնց շրջանառության հսկողության նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են որոշակի պայմաններ (այսուհետ՝ հոգեմետ նյութեր):

4) պրեկուրսորներ (ցուցակ 4), որոնց շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում սահմանափակ է, եւ որոնց նկատմամբ սահմանված են հսկման եղանակներ (այսուհետ՝ պրեկուրսորներ):

Հոդված 5. Պետական քաղաքականությունը թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության եւ ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում

1. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության (այդ թվում՝ ապօրինի) բնագավառում պետական քաղաքականությունը կայանում է թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզավորման, այդ գործունեությանը ներկայացվող պահանջների սահմանման, թմրամիջոցները եւ հոգեմետ նյութերը առողջապահական եւ բժշկա-վերականգնողական նպատակներով օգտագործելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման, թմրամիջոցների (հոգեմետ նյութերի) եւ դրանց շրջանառության հաշվառման, այդ շրջանառության նկատմամբ հսկողության եւ վերահսկողության սահմանման, թմրամոլության, ինչպես նաեւ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրականացման մեջ:

2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառությանը եւ դրանց ապօրինի շրջանառության կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականությունն իրականացվում է ծրագրային հիմունքներով:

Հոդված 6. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության եւ ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության եւ ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հսկելիությունը եւ վերահսկելիությունը:

- 2) թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության տեսակների լիցենզավորումը.
- 3) թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված թմրամոլության եւ իրավախախտումների կանխարգելման առաջնայնությունը.
- 4) թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության համար պատժելիությունը, պատասխանատվությունը եւ դրանց անխուսափելիությունը.
- 5) թմրամոլության բուժման նոր ձևերի եւ մեթոդների մշակման բնագավառում գիտական հետազոտությունների իրականացմանը պետական աջակցությունը.
- 6) թմրամոլության դեմ պայքարում եւ թմրամոլությանը հիվանդների բժշկավերականգնողական կազմակերպությունների ցանցի զարգացմանը պետական աջակցությունը.
- 7) թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ուղղությամբ միջազգային համագործակցությունը:

ԳԼՈՒԽ 2.

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

Հոդված 7. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության եւ ապօրինի շրջանառության կանխարգելման վերահսկողության իրականացման լիազորված մարմինները

Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության եւ ապօրինի շրջանառության կանխարգելման վերահսկողության իրականացման լիազորված մարմինների հիմնական լիազորություններն են՝

- 1) թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառությունը կարգավորող օրենքների, նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը եւ ներկայացումը կառավարությանը.
- 2) Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների որակման եւ չափորոշման ցուցակի մշակումը եւ դրանում փոփոխությունների մասին առաջարկությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.
- 3) պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության հետ կապված գործունեության տեսակների լիցենզավորման խնդիրների քննարկումը.
- 4) թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների իրականացման մասին տեղեկատվության եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացված առաջարկությունների հավաքումը եւ վերլուծումը.
- 5) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների օպերատիվ-հետախուզական, փորձագիտական, գիտական, ուսումնական նպատակներով օգտագործման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների անալոզների, թմրաբույսերի, գործիքների, սարքերի, համակարգչային ծրագրերի, գիտապրակտիկ ձեռնարկների եւ նյութերի անվանացանկի ու չափաբաժինների հաստատումը.

6) Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրաբիզնեսի ասպարեզում ձեւավորված իրավիճակի գնահատումը, Հայաստանի Հանրապետության կառավարություն ամենամյա տեղեկատվության ներկայացումը, Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր պարունակող բույսերի վեգետացիոն շրջանի ժամկետների եւ այդ կապակցությամբ՝ վերահսկման ենթակա տարածքների սահմանագծերի հաստատումը:

Հոդված 8. Թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի շրջանառության եւ ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովը

Թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի շրջանառության եւ ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական լիազորված մարմինների կողմից համաձայնեցված գործունեության նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովի աշխատակարգը եւ հիմնական խնդիրները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 9. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության ընդհանուր կարգը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի շրջանառությունն իրականացվում է սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության բոլոր տեսակներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ միայն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված կոնկրետ գործունեության տեսակի համար լիցենզիա ստանալուց հետո:

Հոդված 10. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզավորումը

1. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության համար լիցենզիաները տրվում են լիազորված պետական կառավարման մարմնի կողմից՝ բարդ ընթացակարգով:

2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի հետ կապված գործունեության տեսակների համար լիցենզիաները տրվում են մինչեւ երեք տարի ժամկետով:

3. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության բնագավառում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ԳԼՈՒԽ 3.

ԹՍՐԱՍԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

Հոդված 11. Մի շարք թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության սահմանափակումը

1. Արգելված նյութերի օգտագործումը թույլատրվում է միայն սույն օրենքի 31-33-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում:

2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով, բժշկի նշանակմամբ, ինչպես նաեւ սույն օրենքի 31-33-րդ հոդվածներով նախատեսված նպատակներով:

3. Պրեկուրսորների շրջանառության սահմանափակումները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի անալոգների շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում արգելվում է:

Հոդված 12. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրության, պահպանման, ներմուծման եւ արտահանման քվոտավորումը

1. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրության, պահպանման, ներմուծման եւ արտահանման քվոտավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի պահպանման նկատմամբ սույն հոդվածի առաջին մասում սահմանված սահմանափակումները չեն տարածվում ապօրինի շրջանառությունից առգրավված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի պահպանման վրա:

Հոդված 13. Նոր թմրամիջոցների, հոգեմետ նյութերի մշակումը

1. Նոր թմրամիջոցների, հոգեմետ նյութերի մշակումը թույլատրվում է միայն սույն օրենքով նախատեսված նպատակներով:

2. Բժշկական նպատակներով օգտագործվող նոր թմրամիջոցների, հոգեմետ նյութերի մշակումը եւ պետական գրանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Նոր թմրամիջոցների, հոգեմետ նյութերի մշակումն իրականացվում է միայն պետական պատվերներին համապատասխան եւ հանձնարարվում է գիտահետազոտական կազմակերպություններին՝ մշված գործունեության համար լիցենզիայի առկայության դեպքում: Եթե մշակված թմրամիջոցը կամ հոգեմետ նյութը ենթադրվում է օգտագործել բժշկական նպատակներով, ապա նրա կլինիկական փորձարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 14. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի արտադրությունը եւ պատրաստումը

1. Թմրամիջոցների ցուցակում ներառված թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի՝ սույն օրենքով սահմանված նպատակներով արտադրությունն իրականացվում է պետական քվոտաների սահմաններում՝ կոնկրետ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրության համար լիցենզիայի առկայության դեպքում:

2. Թմրամիջոցների ցուցակում ներառված թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի՝ սույն օրենքով սահմանված նպատակներով պատրաստումն իրականացվում է կոնկրետ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պատրաստման համար լիցենզիայի առկայության դեպքում:

3. Հոգեմետ նյութերի ցուցակում ներառված, սույն օրենքով սահմանված նպատակով հոգեմետ նյութերի արտադրությունը եւ պատրաստումն իրականացվում են անկախ սեփականության ձեւից, կազմակերպությունների կողմից կոնկրետ հոգեմետ նյութերի արտադրության եւ պատրաստման համար լիցենզիայի առկայության դեպքում:

4. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրությունն իրականացնող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետությունում ենթակա են պետական հաշվառման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

5. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պատրաստումն իրականացնող կազմակերպությունները ենթակա են պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Յոթված 15. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ներառված պատրաստուկների ստացման նպատակով թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի վերամշակումը

Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ներառված պատրաստուկների ստացման նպատակով թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի վերամշակումը, ինչպես նաեւ դրանց հիմքի վրա թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր չհամարվող նյութերի ստացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, գործունեության նշված տեսակի համար լիցենզիայի առկայության դեպքում:

Յոթված 16. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պահպանումը

1. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պահպանումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են կազմակերպությունները հատուկ սարքավորված շինություններում՝ գործունեության նշված տեսակի համար լիցենզիայի առկայության դեպքում:

2. Սույն օրենքով չնախատեսված նպատակներով թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցանկացած քանակությամբ պահպանումն արգելվում է:

Յոթված 17. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ներմուծումն ու արտահանումը

1. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ներառված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պատրաստուկների արտահանումն ու ներմուծումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից տրված եւ ՄԱԿ-ի՝ թմրամիջոցների հանձնախմբի կողմից հաստատված մոնիթինգի ձեւաթղթի վրա լրացված հավաստագրով:

Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ներմուծման կամ արտահանման հավաստագիր ձեւակերպելիս Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը պետք է ղեկավարվի ՄԱԿ-ի՝ Թմրամիջոցների հսկման միջազգային կոմիտեի (ԹՀՄԿ) հաստատած քվոտաներով:

Տարերային աղետների եւ արտակարգ իրավիճակների դեպքում արտահանման հավաստագիր չի պահանջվում:

Հավաստագիրն այլ անձի չի կարող տրվել:

2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ներմուծման ու արտահանման հայտերը համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ՝ ՄԱԿ-ի գործող կոնվենցիաների կողմից հաստատված ձեւով ներմուծման ու արտահանման հավաստագրեր կազմելու համար:

Արտահանման ու ներմուծման թույլտվության դիմումի մեջ նշվում են ներմուծողի կամ արտահանողի անունը, ազգանունը, անվանումը, հասցեն, նաեւ բեռը ստացողի անունը, ազգանունը, յուրաքանչյուր նյութի միջազգային չարտոնագրված անվանումը, այդ անվանման բացակայության դեպքում՝ միջազգային կոնվենցիաների ցուցակներում եւ աղյուսակներում նշված նյութի անվանումը, դեղագործական ձեւը, եթե խոսքը պատրաստուկի մասին է՝ առեւտրային անվանումը (եթե այդպիսին կա), յուրաքանչյուր այն նյութի կամ պատրաստուկի քանակը, որոնց վերաբերյալ ծավալվում է համապատասխան գործողություն, այն ժամկետը, որի ընթացքում դա պետք է իրականանա, ինչպես նաեւ կիրառվելիք փոխադրամիջոցի տեսակը կամ փոխադրման ձեւը եւ ազգային տարածքի վրա սահմանն անցնելու կետը:

Արտահանման թույլտվության դիմումին պետք է կցված լինի ներմուծող երկրի կամ տարածքի վարչակազմի կողմից տրված ներմուծման հավաստագիր (վկայական, թույլտվություն):

3. Հավաստագրերի ձեւերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կողմից՝

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացմամբ:

Արտահանման եւ ներմուծման հավաստագրերի մեջ ներառվում են այն տեղեկությունները, որոնք կան հավաստագիր ստանալու համար ներկայացված հայտի մեջ, ներառյալ՝ իրավասու կազմակերպության անվանումը, որին պետք է այն տրվի:

Հավաստագրերում պետք է նշված լինեն՝

- 1) ներմուծողի կամ արտահանողի անվանումը եւ նրա գտնվելու կամ բնակվելու վայրը.
- 2) թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի անվանումները (առկայության դեպքում՝ միջազգային չարտոնագրված անվանումը).
- 3) ներմուծվող կամ արտահանվող նյութերի եւ անջուր հիմք պարունակող նյութի քանակը, դեղագործական պատրաստուկի դեպքում՝ դեղագործական ձեւը, դրա բաղադրության մեջ եղած հսկվող նյութի դեղաչափը.
- 4) հավաստագրի ուժը կորցնելու ժամկետը.
- 5) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կնիքն ու ղեկավարի ստորագրությունը:

Արտահանման հավաստագրում նշվում են նաեւ ներմուծման հավաստագրի (այլ երկրի համանուն փաստաթղթի) համարը, տրման տարին, ամիսը եւ ամսաթիվը, թույլատրող իրավասու մարմնի անվանումը, որոնք վկայում են, որ համապատասխան թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ներկրումը թույլատրված է:

4. Ներմուծման հավաստագրի պատճենը տրվում է ներմուծողին, մյուսը՝ արտահանող երկրի իրավասու մարմնին՝ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի հավաստագիր (այլ երկրի համանուն փաստաթուղթ) ձեւակերպելու համար, որի պատճենը նախատեսված է ներմուծող երկրի մաքսային ծառայությունների համար, մյուսը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համար:

Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայություններին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին ներկայացվող հավաստագրերի պատճեններից բացի, հավաստագրի պատճենով ուղեկցվում է բեռը, իսկ մյուսն ուղարկվում է ներմուծող երկրի իրավասու մարմնին:

Ներմուծումն իրականացնելուց հետո ներմուծող երկրի իրավասու մարմինը վերադարձնում է արտահանման հավաստագրի վերջին պատճենը, որի վրա կատարված է լինում փաստացի ներմուծված քանակը հավաստող նշում:

Արտահանման հավաստագիրը ձեւակերպվում է ներմուծման հավաստագրի (այլ երկրի համանուն փաստաթղթի) հիման վրա, որը տրվում է ներմուծող երկրի իրավասու մարմնի կողմից:

Արտահանման հավաստագրի (այլ երկրի համանուն փաստաթղթի) վավերացված պատճենը կցվում է բեռի յուրաքանչյուր խմբաքանակին, եւ իրավասու մարմնին այդ հավաստագրի (այլ երկրի համանուն փաստաթղթի) պատճենն ուղարկում է ներմուծող երկրի կամ տարածքի իրավասու մարմին (վարչակազմ):

5. Եթե թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի փաստացի արտահանված խմբաքանակը փոքր է արտահանման հավաստագրում նշված խմբաքանակից, ապա արտահանող երկրի իրավասու կազմակերպությունն այդ փաստի մասին նշում է կատարում համապատասխան փաստաթղթում եւ վերջինիս բոլոր պաշտոնական պատճեններում:

6. Երբ բեռը մուտք է գործում Հայաստանի Հանրապետության տարածք կամ, երբ լրանում է ներմուծման հավաստագրում նշված ժամկետը, իրավասու կազմակերպությունը արտահանող

երկրի իրավասու մարմին է ուղարկում վերոհիշյալ հավաստագիրը՝ նշելով յուրաքանչյուր թմրամիջոցի եւ հոգեմետ նյութի փաստացի ներմուծված քանակը:

7. Առեւտրային փաստաթղթերում (հաշիվ-ապրանքագիր, բեռնման հայտարարագիր, մաքսային, փոխադրային եւ բեռնման այլ փաստաթղթեր) նշվում են բույսերի, նյութերի եւ դրանց պատրաստուկների այն անվանումները, որոնցով դրանք հանդես են եկել միջազգային կոնվենցիաների ցուցակներում, առկայության դեպքում՝ նաեւ առեւտրային անվանումները, ազգային տարածքից արտահանվող եւ այդ տարածք ներմուծման ենթակա խմբաքանակները, ինացույցից դեպքում՝ արտահանողի, ներմուծողի, ինչպես նաեւ ստացողի անունը, ազգանունն ու հասցեն: Հաշիվ-ապրանքագրերը պետք է ունենան Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից վավերացված հավաստագրի համարով եւ դրա տրման տարով, ամսով եւ ամսաթվով դրոշմակնիք:

8. Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումը կամ այդ տարածք բեռների ներմուծումը բանկի կամ փոստարկղի հասցեով արգելվում է:

9. Հայաստանի Հանրապետության տարածքից բեռների արտահանումը՝ կցված մաքսային պահեստների հասցեով, արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ ներմուծող երկրի կառավարությունը ներմուծման վկայականում նշում է նման բեռների ներմուծման թույլտվությունը:

Հայաստանի Հանրապետության տարածք բեռների ներմուծումը՝ կցված մաքսային պահեստների հասցեով, արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու կազմակերպությունը ներմուծման վկայականում նշում է նման բեռների ներմուծման թույլտվությունը:

Կցված մաքսային պահեստից բեռի ցանկացած հանձնման համար պահանջվում է այն կազմակերպությունների թույլտվությունը, որոնց ղեկավարության ներքո է գտնվում տվյալ մաքսային պահեստը: Բեռն արտասահման ուղարկելը սույն հոդվածի իմաստով դիտվում է որպես նոր արտահանում: Կցված պահեստում գտնվող բույսերը, նյութերն ու պատրաստուկները չեն կարող ենթարկվել բնույթը փոփոխող որեւէ գործողության, իսկ փաթեթավորումը չի կարող փոխվել առանց այն իրավասու մարմինների թույլտվության, որոնց ղեկավարության տակ գտնվում է պահեստը:

10. Առանց ընդունված կարգի, ներմուծման կամ արտահանման համար տրված ուղեկցող հավաստագրի, Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող կամ այդ տարածքից արտահանվող թմրամիջոցները եւ հոգեմետ նյութերը, որոնք չեն համապատասխանում հավաստագրին, պահվում են իրավասու մարմինների կողմից՝ մինչեւ տեղափոխման օրինական լինելու ապացույց ներկայացնելը կամ բռնագրավման մասին դատական որոշում կայացնելը:

11. Հայաստանի Հանրապետության տարածքով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց արեկուրսորների տարանցիկ տեղափոխումը թույլատրվում է, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

12. Օդային փոխադրամիջոցով այլ երկիր բեռի փոխադրման դեպքում սույն հոդվածի տասնմեկերորդ մասի դրույթները չեն կիրառվում: Եթե օդային փոխադրամիջոցը միջանկյալ կամ ստիպողական վայրէջք է կատարում Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա բեռը դիտվում է արտահանված դեպի նշանակված երկիր, եթե որոշակի հանգամանքներից ելնելով՝ այն բեռնաթափվում է:

Հոդված 18. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի տեղափոխման ընդհանուր կարգը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի տեղափոխման իրականացման իրավունքը վերապահվում է կազմակերպություններին՝ գործունեության տվյալ տեսակի համար լիցենզիայի առկայության դեպքում:

2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պահպանումն իրականացնում են դրանք տեղափոխող կազմակերպությունները:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի տեղափոխման, ինչպես նաեւ դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Ֆիզիկական անձանց թույլատրվում է, սույն օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան, բժշկական նպատակներով ստացված թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի տեղափոխումը դեղատնային կազմակերպության կողմից տրված եւ թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի ստացման օրինականությունը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում:

Հոդված 19. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի առաքման արգելումը

1. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի փոստային, այդ թվում՝ միջազգային առաքումն արգելվում է:

2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի առաքումը մարդասիրական օգնության տեսքով արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ արտակարգ իրավիճակներում թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը կառավարության որոշմանը համապատասխան ուղարկվում են կոնկրետ վայր:

Հոդված 20. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի բաշխումը, բացթողումը եւ իրացումը

Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի բաշխումը, բացթողումը եւ իրացումն իրականացնում են կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, գործունեության նշված տեսակի համար լիցենզիայի առկայության դեպքում:

Հոդված 21. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ձեռքբերումը

Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ձեռքբերումը արտադրության, պատրաստման, վերամշակման, իրացման, օգտագործման համար (այդ թվում՝ բժշկական նպատակներով) իրականացնում են կազմակերպությունները՝ սույն օրենքին համապատասխան, գործունեության նշված տեսակի համար լիցենզիայի առկայության դեպքում:

Հոդված 22. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի բացթողումը ֆիզիկական անձանց համար

1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի բացթողումը ֆիզիկական անձանց համար տեղի է ունենում միայն առողջապահության դեղատնային կազմակերպություններում՝ նրանց գործունեության նշված տեսակի համար լիցենզիայի առկայության դեպքում: Բժշկական եւ դեղագործական աշխատողների, ինչպես նաեւ այն հիմնարկների եւ կազմակերպությունների ցանկերը, որոնց վերապահված է քաղաքացիներին թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր բաց թողնելու իրավունքը, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ներառված թմրամիջոցները եւ հոգեմետ նյութերը բժշկական նպատակներով բաց են թողնվում դեղատոմսերով:

3. Թմրամիջոցները եւ հոգեմետ նյութերը ֆիզիկական անձանց համար բաց թողնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը որոշում է թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ներառված կոնկրետ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի նշանակման առավելագույն ժամկետները, ինչպես նաեւ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի քանակը, որը կարող է դուրս գրվել մեկ դեղատոմսով:

5. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ընդգրկված թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի նշանակման դեպքում բուժող բժիշկը պարտավոր է հիվանդի հետազոտման միջոցով պարզել հետագա նշանակման անհրաժեշտությունը եւ կատարել համապատասխան գրառում բժշկական փաստաթղթերում:

6. Առողջապահության դեղատնային հիմնարկներին եւ կազմակերպություններին արգելվում է թմրամիջոցների ցուցակում ներառված թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի բացթողումը՝ ավելի քան տասն օր առաջ դուրս գրված դեղատոմսով:

Չորրորդ 23. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի դուրսգրման դեղատոմսերը

1. Թմրամիջոցները եւ հոգեմետ նյութերը դուրս են գրվում հատուկ ձեւաթղթի դեղատոմսերով:
2. Նշված դեղատոմսերի ձեւերը, դրանց գրանցման, հաշվառման եւ պահպանման կարգը, ինչպես նաեւ ձեւակերպման կանոնները սահմանում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը:
3. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի նշանակում պարունակող դեղատոմսերի՝ առանց համապատասխան բժշկական ցուցումների կամ ձեւակերպման սահմանված կանոնների խախտումներով հանձնումն արգելվում է եւ առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Չորրորդ 24. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի փաթեթավորումն ու պիտակավորումը

1. Բժշկական նպատակներով օգտագործվող թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտաքին ու ներքին փաթեթավորումը եւ պիտակավորումը պետք է համապատասխանի սույն օրենքի, «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների եւ իրավական ակտերի պահանջներին:
2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտաքին փաթեթավորումը պետք է բացառի թմրամիջոցը եւ հոգեմետ նյութը փաթեթից դուրս հանելու հնարավորությունը՝ առանց նշված փաթեթի ամբողջականությունը խախտելու:
3. Բժշկական նպատակներով օգտագործվող թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ներքին փաթեթավորումը պետք է ընդգծված լինի կրկնակի կարմիր շերտերով:
4. Բժշկական նպատակներով օգտագործվող թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտաքին ու ներքին փաթեթավորումը եւ պիտակավորումը, եթե չի համապատասխանում սույն հոդվածի առաջին, երկրորդ եւ երրորդ մասերի պահանջներին, ապա թմրամիջոցները եւ հոգեմետ նյութերը ոչնչացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Չորրորդ 25. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների, գործիքների կամ սարքավորումների ոչնչացումը

1. Այն թմրամիջոցները, հոգեմետ նյութերը, ինչպես նաեւ դրանց պատրաստման գործիքները եւ սարքավորումները, որոնց հետագա օգտագործումը ճանաչվել է աննպատակահարմար, ոչնչացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
2. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ոչնչացումը իրականացվում է այն դեպքերում, եթե՝
 - 1) լրացել է դրանց պիտանիության ժամկետը.
 - 2) թմրամիջոցը կամ հոգեմետ նյութը ենթարկվել է քիմիական կամ ֆիզիկական ներգործման, որի հետեւանքով դարձել է անպիտան, եւ որի վերականգնումը կամ վերամշակումը հնարավոր չէ.
 - 3) չօգտագործված թմրամիջոցը վերադարձվել է մահացած հիվանդի հարազատներից.
 - 4) հնարավոր չէ պարզել պատրաստուկի թմրամիջոց կամ հոգեմետ նյութ լինելու հանգամանքը.
 - 5) ապօրինի շրջանառությունից առգրավված թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը չեն կարող օգտագործվել բժշկական, գիտական եւ այլ նպատակներով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Հոդված 26. Միջազգային համագործակցությունը

Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության եւ դրա արդյունքում գոյացած գույքի, ֆինանսական միջոցների օրինականացման դեմ պայքարն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինները համագործակցում են այլ երկրների՝ նույն խնդիրներն իրականացնող մարմինների եւ միջազգային կազմակերպությունների հետ՝ միջազգային համաձայնագրերին համապատասխան:

Հոդված 27. Պրեկուրսորների շրջանառության նկատմամբ հսկողությունը

1. Պրեկուրսորների շրջանառության հետ կապված գործունեության իրականացման ժամանակ ցանկացած գործառույթ, որի դեպքում փոփոխվում է բաղադրիչի քանակը, գրանցվում է հատուկ մատյանում: Մատյանները պահպանվում են տասը տարի՝ դրանցում վերջին գրառումը կատարելուց հետո:

2. Մատյանների պահպանման եւ վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Պրեկուրսորների շրջանառության հետ կապված գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք պարտավոր են իրավասու մարմիններին յուրաքանչյուր ամիս տեղեկացնել իրենց գործունեության մասին:

4. Այն դեպքերում, երբ կան բավարար հիմքեր ենթադրելու, որ պրեկուրսորների բաղադրիչներից մեկը նախատեսված է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի անօրինական արտադրության համար, սույն օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասում նշված մարմինների դիմումների հիման վրա մինչեւ երեք ամիս ժամկետով կարող է դադարեցվել նշված բաղադրիչի շրջանառության հետ կապված կազմակերպությունների գործունեությունը:

ԳԼՈՒԽ 4.

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հոդված 28. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործումը բժշկական նպատակներով

1. Բժշկական նպատակներով կարող են օգտագործվել թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ընդգրկված թմրամիջոցները եւ հոգեմետ նյութերը:

2. Բժշկական նպատակներով օգտագործման թույլատրված թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի վրա տարածվում են սույն օրենքին չհակասող դեղամիջոցների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

3. Առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը սահմանում է բժշկական նպատակներով թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործման կարգն ու պայմանները:

4. Դեղատնային կազմակերպություններում եւ առողջապահական հիմնարկներում թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության նկատմամբ հսկողությունն իրականացվում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի սահմանած կարգով:

5. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է թմրամոլության բուժումը թմրամիջոցների ցուցակում ընդգրկված թմրամիջոցներով եւ հոգեմետ նյութերով:

6. Առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի սահմանած կարգով թույլատրվում է թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ընդգրկված միջազգային օդանավերի եւ գնացքների դեղապնակներում պահվող թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի սահմանափակ քանակությամբ ներմուծում (արտահանում)՝ անհետաձգելի օգնություն ցուցաբերելու համար:

7. Սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված թույլտվության մեջ պետք է նշված լինի թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պահպանման եւ օգտագործման համար պատասխանատու անձը կամ անձինք, ինչպես նաեւ դրանց ստացման, հաշվառման, պահպանման, բացթողման պայմանները, եւ պետք է սահմանվի դրանց օգտագործման մասին հաշվետվության կարգը:

8. Նշված դեղապնակներում պահվող թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործման հսկողությունը դրվում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի, ինչպես նաեւ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման իրականացնող մարմինների վրա:

Հոդված 29. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործումը տարանցիկ ուղեւորների բուժման համար

1. Հայաստանի Հանրապետության տարածքում տարանցիկ կարգով անցնող հիվանդը բուժման նպատակով կարող է իր հետ ունենալ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ընդգրկված թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Եթե սույն հոդվածի առաջին մասում նշված անձը մնում է Հայաստանի Հանրապետության տարածքում եւ բուժումը շարունակելու համար թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի լրացուցիչ ձեռքբերման կարիք է զգում, ապա բացթողումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում տրված դեղատոմսով՝ օտարերկրյա քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ կանոններին համապատասխան:

Հոդված 30. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործումը անասնաբուժության մեջ

1. Անասնաբուժության մեջ, ինչպես նաեւ կենդանիների որսի համար օգտագործվող թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցանկը հաստատում են առողջապահության եւ գյուղատնտեսության ոլորտների լիազոր մարմինները:

2. Անասնապահության մեջ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործման պայմանները եւ կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 31. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործումը գիտական եւ ուսումնական նպատակներով

Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործումը գիտական եւ ուսումնական նպատակներով թույլատրվում է կազմակերպությունների գործունեության նշված տեսակի լիցենզիայի առկայության դեպքում:

Հոդված 32. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործումը փորձագիտական գործունեության մեջ

1. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի օգտագործմամբ փորձաքննության անցկացում թույլատրվում է իրավաբանական անձանց՝ նշված գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի առկայության դեպքում:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության փորձագիտական ստորաբաժանումներում, ոստիկանության, ազգային անվտանգության եւ մաքսային մարմիններում փորձաքննությունները եւ այդօրինակ այլ գործառույթներ իրականացվում են առանց լիցենզիայի:

Հոդված 33. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների վերահսկվող փոխադրումները եւ ստուգողական զննումը

Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայտման նպատակով օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացնող մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն անցկացնել վերահսկվող փոխադրումներ եւ ստուգողական գնումներ:

Հոդված 34. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության հաշվետվությունը

Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք պարտավոր են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ՝ լիցենզիայի պայմանների եւ պահանջների վերաբերյալ:

Հոդված 35. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի գույքագրումը

1. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք պարտավոր են եռամսյակը մեկ անցկացնել այդ անձանց տնօրինության տակ գտնվող թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի գույքագրում եւ կազմել ապրանքանյութային արժեքների հաշվեկշիռ:
2. Հաշվեկշռում տարբերությունների սվյալների կամ հաշվեկշռի տեղեկություններն անցկացված գույքագրման արդյունքներին չհամապատասխանելու մասին տեղեկությունները հայտնաբերելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հայտնվում են իրավասու մարմիններին:

Հոդված 36. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների հետ կապված գործունեության գրանցումը

Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության հետ կապված գործունեության իրականացման դեպքում ցանկացած գործառույթ, որի արդյունքում փոփոխվում են քանակը եւ վիճակը, ենթակա է գրանցման հատուկ մատյաններում: Մատյանները պահպանվում են վերջին գրառումից հետո՝ տասը տարվա ընթացքում: Մատյանների վարման եւ պահման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 5.

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Հոդված 37. Առանց բժշկի նշանակման թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործման արգելումը

Հայաստանի Հանրապետությունում առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելն արգելվում է:

Հոդված 38. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը կանխարգելող մարմինները

1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ոստիկանությունը, ազգային անվտանգության, մաքսային եւ առողջապահության բնագավառի լիազորված մարմինները՝ իրենց իրավասությունների սահմաններում:
2. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման գործունեությունը համակարգում են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ

պրեկուրսորների ապօրինի շրջանառության ոլորտում խնդիրների լուծման համար իրավասու մարմինները:

3. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման կազմակերպումն իրականացվում է նպատակային ծրագրերին համապատասխան:

Չոդված 39. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման միջոցառումների ֆինանսավորումը

Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հակազդմանն ուղղված նպատակային ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի եւ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

Չոդված 40. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված գործերով հարցումները եւ հանձնարարությունների կատարումը

1. Դատավորների, դատախազների, ինչպես նաեւ քննիչների եւ հետաքննության մարմինների պաշտոնատար անձանց հարցումները՝ կապված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության եւ ապօրինի շրջանառության հետ, կատարում են պաշտոնատար անձինք նշված հարցումների ստացման օրվանից սկսած 3 օրվա ընթացքում՝ չհաշված հանգստյան եւ տոնական օրերը:

2. Նշված հարցումներով տեղեկությունները բանկային եւ վարկային կազմակերպությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Չոդված 41. Առանձին տեսակների մասնագիտական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումները

1. Քաղաքացիների առողջության, նրանց իրավունքների եւ օրինական շահերի պահպանման, երկրի պաշտպանության ապահովման եւ անվտանգության նպատակով Հայաստանի Հանրապետությունում թմրամոլությամբ հիվանդների համար սահմանվում են սահմանափակումներ՝ կապված մասնագիտական եւ առավել վտանգի աղբյուր հանդիսացող գործունեության հետ:

2. Սույն օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասում նշված մարմինների պաշտոնատար անձինք եւ իրավաբանական անձանց ղեկավարները, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրենց լիազորությունների շրջանակներում, թմրանյութերի ազդեցության տակ գտնվող անձանց ազատում են մասնագիտական ցանկացած տիպի գործունեության եւ առավել վտանգի աղբյուրի հետ կապված աշխատանքի կատարումից:

3. Առանձին տեսակների մասնագիտական եւ առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեության ցանկը, որով զբաղվելու համար կատարվել են սահմանափակումներ եւ նշված են սույն հոդվածի առաջին մասում, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Չոդված 42. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության ոլորտում քարոզչության արգելումը եւ գովազդի սահմանափակումը

1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների գովազդումը եւ քարոզչությունը (ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գործունեությունն է՝ ուղղված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների տարածման ձեւերի, պատրաստման մեթոդների, ստացման, օգտագործման եւ ձեռքբերման տեղերի մասին տեղեկությունների տարածմանը), ինչպես նաեւ գրականության հրապարակումը եւ տարածումը զանգվածային լրատվամիջոցներով, նշված տեղեկությունների տարածումը համակարգչային ցանցերով կամ այդ տեղեկությունների տարածման նպատակով այլ գործողություններն արգելվում են:

2. Արգելվում է քարոզել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ պրեկուրսորների առավելությունը միմյանց նկատմամբ:

3. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ցուցակներում ընդգրկված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի գովազդը կարող է իրականացվել բացառապես մասնագիտական գրականությամբ՝ նախատեսված բժշկական եւ դեղագործական ոլորտի աշխատակիցների համար: Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղամիջոցների տարածումը գովազդի նպատակով արգելվում է:

4. Սույն հոդվածի նորմերի խախտումը հանգեցնում է պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5. Կազմակերպության կողմից սույն հոդվածի առաջին, երկրորդ, եւ երրորդ մասերով նախատեսված կրկնակի խախտման փաստերի հայտնաբերման դեպքերում սույն օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասով նշված մարմինների ներկայացմամբ, նշված իրավաբանական անձանց գործունեությունը կարող է կասեցվել երեք ամսով կամ դադարեցվել դատարանի որոշմամբ:

6. Սույն հոդվածի հինգերորդ մասով նշված հիմքերով կազմակերպության գործունեության դադարեցման պահանջով կարող է դիմում տրվել դատարան՝ սույն օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասում նշված մարմինների կողմից:

Պոզված 43. Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը եւ տարածումը

1. Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, պրեկուրսորների, անալոգների մշակման, կատարելագործման, արտադրության, վերամշակման պատրաստման ձեւերի, մեթոդների, եղանակների, համակարգչային ծրագրերի, գիտագործնական ձեռնարկների եւ նյութերի, գործիքների եւ սարքավորումների տեխնիկական հնարավորությունների մասին տեղեկատվության ապօրինի ձեռքբերման եւ պատրաստման եղանակների, գործածման, ձեռքբերման, պահելու, վաճառքի, վաճառահանման, տեղափոխման, տարանցիկ տեղափոխման՝ գործածման ձեւերի եւ հետքերի քողարկման, տեղերի եւ վայրերի, գաղտնիության ապահովման, քողարկելու, թաքցնելու, այդ գործողությունները բացահայտող սարքերի աշխատանքի տեխնիկական հնարավորությունների եւ հայտնաբերման ձեւերի ու մեթոդների արդյունավետության նվազեցմանն ուղղված գործողությունների, թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր պարունակող բույսեր ցանելու, աճեցնելու, հավաքելու, գործածման համար նախապատրաստման ձեւերի, մեթոդների, եղանակների վերաբերյալ տեղեկատվության որոնումը, հավաքումը, տրամադրումը եւ տարածումը, ինչպես նաեւ այդ կապակցությամբ խորհրդատվությունն արգելվում է եւ առաջ է բերում պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված տեղեկատվության որոնումը, հավաքումը եւ օգտագործումը թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմիններին՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հակազդմանն ուղղված գործունեությունն իրականացնելու նպատակով:

Պոզված 44. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների բռնագրավումը

1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության ընթացքում առգրավված թմրամիջոցները, հոգեմետ նյութերը եւ դրանց պրեկուրսորները, ինչպես նաեւ պատրաստման գործիքներն ու սարքավորումները օրենքով սահմանված կարգով բռնագրավվում են: Դրանք կառավարության սահմանած կարգով ոչնչացվում են:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված թմրամիջոցները, հոգեմետ նյութերը եւ դրանց պրեկուրսորները, ինչպես նաեւ գործիքները եւ սարքավորումները, որոնց հետագա օգտագործումը բռնագրավում իրականացնող մարմինը ճանաչել է աննպատակահարմար, ոչնչացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված գործունեության արդյունքում ստացված կամ նշված գործունեության իրականացման համար օգտագործվող գույքը ենթակա է բռնագրավման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 45. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության լիազորություն ունեցող մարմինների պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները

1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության գործունեության հետ կապված խախտումների մասին բավարար տվյալների առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության դատախազության, ոստիկանության, ազգային անվտանգության, մաքսային մարմինների եւ սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձինք իրենց իրավասությունների շրջանակներում իրավունք ունեն՝

1) ստուգել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների արտադրության եւ պատրաստման ընթացակարգերի համապատասխանությունը սահմանված կանոններին, անհրաժեշտության դեպքում վերցնել նմուշներ համեմատական հետազոտություն կատարելու համար.

2) կնքել համապատասխան շինությունները եւ պահանջել ներկայացնել փաստաթղթեր եւ տալ բացատրություններ.

3) թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության գործունեության տեսակների թույլտվություն ունեցող կազմակերպություններին տալ պարտադիր կատարման հանձնարարականներ՝ հայտնաբերված խախտումների վերացման համար:

2. Նախաքննության եւ հետաքննության մարմինների պաշտոնատար անձինք, քննիչները կամ դատախազները հանցագործության առկայության դեպքում կարող են՝

1) մուտք գործել ձեռնարկատիրական եւ աշխատանքային այլ գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող տարածքներ (բացի օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների եւ օտարերկրյա պետությունների հյուպատոսական հիմնարկների տարածքներից եւ նրանց ծառայողական տրանսպորտային միջոցներից), գույքի սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչի կամ նրա լիազորած անձանց, իսկ նրանց բացակայության դեպքում նաեւ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ կատարել զննություն (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները), արձանագրությամբ առգրավել իրավախախտման փաստին անմիջականորեն առնչվող անհրաժեշտ փաստաթղթեր, հումքի եւ արտադրանքի նմուշներ, կնքել փաստաթղթերի, դրամի եւ ապրանքանյութական արժեքների պահատեղերը.

2) պահանջել եւ ստանալ պաշտոնատար ու նյութական պատասխանատու անձանցից տեղեկություններ եւ բացատրություններ իրավախախտման փաստի վերաբերյալ.

3) պահանջել կատարելու վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ.

4) կասեցնել իրավախախտում թույլ տված անձանց գործողությունները:

3. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության գործունեության հետ կապված խախտումների հայտնաբերման դեպքում նշված գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք պարտավոր են իրենց իրավասությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ, իսկ վարչական իրավախախտման կամ հանցագործության առկայության դեպքում անհրաժեշտ նյութեր տրամադրել համապատասխան մարմիններին:

4. Սույն հոդվածի առաջին մասում նշված պաշտոնատար անձինք պարտավոր են միջոցներ ձեռնարկել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների շրջանառության հետ կապված հայտնաբերված վարչական իրավախախտումների եւ հանցագործությունների կանխման եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 6.

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԹՄՐԱՍՈՒՈՒԹՅԱՄԲ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ

Հոդված 46. Բուժագնությունը

1. Բուժագնությունն իրականացնում է առողջապահության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Բուժագնության արդյունքում թմրամիջոց կամ հոգեմետ նյութ գործածած անձի՝ ստացիոնար կամ ամբուլատոր պայմաններում բժշկական հետազոտման վերաբերյալ որոշումը կայացնում է բուժագնություն իրականացնող բժիշկ-նարկոլոգը կամ բուժող բժիշկ-նարկոլոգը:

Հոդված 47. Բժշկական հետազոտումը

1. Անձը, որի նկատմամբ կան բավարար հիմքեր կասկածելու, որ տառապում է թմրամոլությամբ, գտնվում է թմրանյութի ազդեցության տակ կամ առանց բժշկի նշանակման օգտագործում է թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, ուղարկվում է բժշկական հետազոտման:
2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտումը կատարում են առողջապահության բնագավառի իրավասու մարմինները՝ բուժագնության արդյունքների կամ անձի կամավոր դիմումի հիման վրա: Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք ենթակա են պարտադիր հետազոտման եւ բուժման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
3. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտման ուղարկելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց բժշկական հետազոտության ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 48. Բժշկական դիտարկումը

1. Անձը, որն առանց բժշկական նշանակման, հազվադեպ կամ կարճատեւ ժամկետում կանոնավոր գործածում է թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր, եւ որը, ըստ բժշկական քննման, ամբուլատոր կամ ստացիոնար հետազոտման, զերծ է կայուն, ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն ձեռք բերելու անմիջական վտանգից, ենթակա է բժշկական կարճատեւ դիտարկման:
2. Անձը, որն ընդունել է կամավոր, պարտադիր կամ հարկադիր բուժման կուրս, լրիվ կամ մասնակի ապաքինվել է, ենթակա է բժշկական երկարատեւ դիտարկման:
3. Բժշկական պարտադիր դիտարկումը սահմանվում է բժշկական երկարատեւ դիտարկման կարիք ունեցող հիվանդների եւ բոլոր դեպքերում՝ մինչեւ 21 տարեկան անձանց նկատմամբ:

Հոդված 49. Թմրամոլներին ցուցաբերվող բժշկական օգնությունը

1. Բժշկական օգնությունը թմրամոլներին ցուցաբերվում է սույն օրենքի 47-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին համապատասխան:

2. Մինչև 14 տարեկան անչափահասներին բժշկական օգնությունը ցուցաբերվում է նրանց օրինական ներկայացուցիչների դիմումով, իսկ 14-ից 18 տարեկան անչափահասներին՝ նրանց համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Բժշկական օգնությունը (կամավոր, պարտադիր եւ հարկադիր) ցուցաբերվում է դրա կարիքն ունեցող այն թմրամոլությամբ հիվանդին, որն առանց բժշկական նշանակման, կանոնավոր գործածում է թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր, ձեռք է բերել ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն, բժշկական հետազոտման արդյունքում ստացել է «թմրամոլություն» ախտորոշումը, սակայն ի վիճակի է, թեկուզ ժամանակավորապես, ինքնուրույն հաղթահարել թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր օգտագործելու ֆիզիոլոգիական, հոգեբանական կախվածությունը:

4. Անհետաձգելի (պարտադիր, հարկադիր) բժշկական օգնությունը ցուցաբերվում է դրա կարիքն ունեցող թմրամոլությամբ հիվանդին, եթե նա առանց բժշկական նշանակման անընդհատ գործածում է թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր, ձեռք է բերել անդառնալի, ֆիզիոլոգիական կամ հոգեբանական կախվածություն, բժշկական հետազոտման արդյունքում ստացել է «թմրամոլություն» ախտորոշումը եւ ի վիճակի չէ, թեկուզ ժամանակավորապես, առանց բժշկական միջամտության հաղթահարել թմրամիջոցներ եւ հոգեմետ նյութեր օգտագործելու ֆիզիոլոգիական, հոգեբանական կախվածությունը:

5. Այն թմրամոլների նկատմամբ, որոնք գտնվում են բժշկական հետազոտության ներքո եւ առանց բժշկի նշանակման շարունակում են օգտագործել թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, ինչպես նաեւ այն անձանց նկատմամբ, որոնք դատապարտվել են հանցագործություն կատարելու համար եւ կարիք ունեն բուժման, դատարանի որոշմամբ կարող են նշանակվել հարկադիր բուժման միջոցներ:

6. Թմրամոլությամբ հիվանդները բժշկական օգնություն ստանալիս օգտվում են հիվանդի իրավունքներից՝ քաղաքացիների առողջության պահպանման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը համապատասխան:

7. Պետությունը թմրամոլությամբ հիվանդներին երաշխավորում է կառավարության սահմանած կարգով անվճար բժշկական օգնության ցուցաբերում,

որը ներառում է հետազոտում, խորհրդատվություն, ախտորոշում, բուժում եւ բժշկասոցիալական վերականգնում:

Հոդված 50. Առողջապահական հիմնարկների գործունեությունը թմրամոլությամբ հիվանդներին բժշկական օգնություն ցուցաբերելիս

1. Պետությունն աջակցում է թմրամոլների հետազոտմանը, կոնսուլտացիային, բուժմանը եւ բժշկասոցիալական վերականգնմանը:

2. Թմրամոլների նկատմամբ բժշկական դիտարկման եւ նրանց հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 51. Թմրամոլությամբ հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերման գործունեության համակարգումը

1. Թմրամոլությամբ հիվանդների բժշկական օգնության ծառայության կազմում են գտնվում առողջապահության համակարգի կազմակերպությունները: Դրանց համակարգումն իրականացնում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը:

2. Առողջապահության պետական լիազոր մարմինը մշակում եւ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում բնակչության նարկոլոգիական օգնության կատարելագործմանը եւ նարկոլոգիական ծառայության զարգացմանը, թմրամոլության ախտորոշման ժամանակակից մեթոդների մշակմանը եւ ներդրմանը, թմրամոլությամբ հիվանդների բուժմանն ու բժշկասոցիալական վերականգնմանն ուղղված նպատակային ծրագրեր:

ԳԼՈՒԽ 7.

ԹՄՐԱՍՈՒՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱԽՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 52. Տարեկան ծրագիրը

1. Թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի աշխատանքներն իրականացվում են տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում եւ կարգով:
2. Տարեկան ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվում պետական բյուջեի նախագծի կազմում:

Հոդված 53. Տարեկան ծրագրի բովանդակությունը եւ մշակման սկզբունքները

Տարեկան ծրագիրը ներառում է՝

- 1) ծրագրի հիմնական խնդիրները.
- 2) նախատեսված աշխատանքների ծավալները եւ իրականացման ժամանակացույցը.
- 3) նախատեսված աշխատանքների ֆինանսավորման համամասնությունները.
- 4) ծրագրի կատարման սկզբունքները եւ նախատեսված աշխատանքների իրականացման առաջնահերթությունները.
- 5) վերլուծություն (տեղեկանք) հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության (այդ թվում՝ քողարկվածության վիճակի), ինչպես նաեւ բնակչության շրջանում թմրամոլության տարածման քանակական ու որակական բնութագրի եւ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցավորության կառուցվածքի եւ շարժի մասին.
- 6) թմրամոլների բուժման եւ նրանց առողջության վերականգնման ուղղությամբ նախատեսվող միջոցառումները.
- 7) բնակչության շրջանում (հատկապես երիտասարդների եւ դեռահասների շրջանում) թմրամոլության դեմ պայքարի, թմրամոլության կանխարգելման, հակաթմրամոլային քարոզչության իրականացման ուղղությամբ նախատեսվող միջոցառումները.
- 8) թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում իրավասու պետական մարմիններին համապատասխան նյութատեխնիկական բազայով ապահովելու ուղղությամբ նախատեսվող միջոցառումները.
- 9) նախատեսված աշխատանքները՝ ըստ լիազորված մարմինների.
- 10) Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում աշխատանքների իրականացման եւ ֆինանսավորման (այդ թվում՝ օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված օգնությունների հաշվին) ծավալային ցուցանիշները եւ այդ գործընթացի վերահսկողության կարգը.
- 11) թմրամոլների բուժման համար բուժվերականգնողական կազմակերպություններին նյութատեխնիկական բազայի ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումները.

12) տեղեկանք թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրության եւ օգտագործման (այդ թվում՝ բժշկական, գիտական, ուսումնական, փորձագիտական, օպերատիվ հետախուզական եւ անասնաբուժական նպատակներով) վերաբերյալ.

13) այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են ծրագրի համակողմանի ներկայացման համար:

3. Տարեկան ծրագրի հետ կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում դրա կատարումն ապահովող օրինագծերը:

Պրովաճ 54. Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը

Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը հերթական տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մասն է:

ԳԼՈՒԽ 8.

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պրովաճ 55. Հայաստանի Հանրապետության պաշտոնատար անձանց եւ քաղաքացիների, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

1. Սույն օրենքի խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները եւ պաշտոնատար անձինք, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն:

2. Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու թույլտվությունը կարող է արգելվել օտարերկրյա այն քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք հանցագործություններ են կատարել թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ու դրանց արեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված: Իսկ եթե այդ անձինք արդեն գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա հարկադիր վտարվում են:

Պրովաճ 56. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՐ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ**

**10 փետրվարի 2003թ.
ՀՕ-518**